ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Սիս համայնք, գ. Սիս, հեռ. 077-200-720

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 25 » Նոյեմբերի 2011 թվականի N 20 - Ն

ՀԱՄԱՅՆՔԻ 2011 Թ-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի 16-րդ հոդվածի 3- րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

Հաստատել Սիս գյուղական համայնքի 2011 թ-ի բյուջեում կատարված հետևյալ փոփոխությունները:

Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսային մասին ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ 1.6.1 հատվածի 5113 հոդվածը պակասեցնել 950.0 հազար դրամով, իսկ ֆոնդային բյուջեի ծախսային մասի կրթություն (այլ դասերին չպատկանող) 9.8.1 հատվածի 5122 հոդվածը ավելացնել 950.0 հազար դրամ:

Ավագանու անդամներ՝

Կողմ (6) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ն. Սեյրանյան
Ռ. Բաբայան
Ռ.Աթասյան
Ա. Բեգունց
Թ. Քիշմիրյան
Հ. Մելքոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԵՂՅԱՆ**

2011թ. Նոյեմբերի 25
գ. Սիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Սիս համայնք, գ. Սիս, հեռ. 077-200-720

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 25 » Նոյեմբերի 2011 թվականի N 21 – Ն

ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2012 Թ–Ի ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության « Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 10- րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության «Տեղական Ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 18–րդ կետի դրույթներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***
Սահմանել Սիս համայնքում տեղական տուրքերի և վճարների 2012 թ-ի հետևյալ դրույքաչափերը:

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի,շինությունների/ներառյալ ոչ հիմնական / շինարարության / տեղադրման / թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝
   1)հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական / ամառանոցային/ տների,ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարարական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ .
2) Սույն կետի 1-ին ենթակետի « ա » պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝
ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար `15000 դրամ ,
բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ ,
գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000 դրամ.

3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 դրամ .
բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետակաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների,վերակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ .
2)բացի օբյեկտի վերակառուցման,ուժեղացման,վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում նաև կցակառույցների,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի,կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.
3) նախատեսվում է միայն կցակառույցների ,վերնակառույցների ,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ 2500 դրամ :
4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ:
2)ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ:

5. Համայնքի տարածքում՝
1)բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ.
2)հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 150000 դրամ:
3) թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության յուրաքանչյուր տարվա համար սահմանել՝ 50000 դրամ.
6.Համայնքի տարածքում՝ առևտրի,հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները),խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝
1) առևտրի օբյեկտների համար՝ 40000 դրամ.
2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ
3) բաղնիքների (սաունաների) համար՝ 300000 դրամ.
4) խաղատների կազմակերպման համար՝ 750000 դրամ.
5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 300000 դրամ.
6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 125000 դրամ:
7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝
1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդով արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ .
2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը մինչև 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ .
3) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.
4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:
8.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 2000 դրամ.
9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 5000 դրամ:

10.Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու , շինարարության ավարտը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 5000 դրամ :
11.Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու,հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 3000 դրամ:

12.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար սահմանել՝ 2000 դրամ :
13. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար ՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց աղբահանության վճար չսահմանել:
14. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքագրման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տրամադրվող թույլտվության վճար սահմանել՝ 2000 դրամ:

15.Համայնքի տարածքում բոլոր վճարողների համար սահմանել տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափեր:
16. 2012 թ-ի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի փոփոխություններ չեն կարող կատարվել:
17. 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկվել է 0.5 գործակցի կիրառմամբ:
18. Տեղական տուրքերը և վճարները ճիշտ հաշվարկելու, ժամանակին գանձելու պատասխանատվությունը դնել կրտսեր խմբի առաջին կարգի մասնագետի վրա:
19. Տեղական տուրքերը և վճարները հաշվարկելու, և գանձելու կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը:

Ավագանու անդամներ՝

Կողմ (6) **Դեմ (0)** **Չեռնպահ(0)**

Ն. Սեյրանյան
Ռ. Բաբայան
Ռ.Աթասյան
Ա. Բեգունց
Թ. Քիշմիրյան
Հ. Մելքոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐՄԵՆ ԵՂՅԱՆ**

2011 թ. Նոյեմբերի 25
գ. Սիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Սիս համայնք, գ. Սիս, հեռ. 077-200-720

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 25 » Նոյեմբերի 2011 թվականի N 22 – Ն

2012 Թ-Ի ՀԱՄԱՐ ՀՈԱԿ « ԱՆՈՒՇԻԿ »ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին»Օրենքի 16-րդ հոդվածի 19 -րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը ՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

Համայնքի «Անուշիկ» մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ-ում ծնողական գումարի վարձավճարի չափը սահմանել ամսական 3500 դրամ :

Ավագանու անդամներ՝

Կողմ (6)	**Դեմ (0)**	**Չեռնպահ(0)**
Ն. Սեյրանյան		
Ռ. Բաբայան		
Ռ.Աթասյան		
Ա. Բեգունց		
Թ. Քիշմիրյան		
Հ. Մելքոնյան		

ՀԱՄԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐՄԱՆ ԵՂՅԱՆ**

2011 թ. Նոյեմբեր 25
գ. Սիս